ՀԱՂՈՒՐԴՈՒՄՆԵՐ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔՆ ԱՂՎԱՆՔ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐ
(Ավանդություն եւ իրականություն)

Ավանդական մի պատմության համաձայն՝ քրիստոնեության մասին առաջին պատկերացումներն Աղվանքում կազմվել են Հիսուս Քրիստոսի տասներկու առաքյալներից Ս. Թադեոսի (Հուդա, Ղեբեոս[1]) աշակերտ Եղիշայի քարոզչական գործունեության շնորհիվ: Ավանդությունը զետեղված է Մովսես Կաղանկատվացու (ով գրականության մեջ կոչվում է նաեւ Դասխուրանցի) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում[2] եւ ապա տեղ գտել նաեւ մեր մյուս պատմիչների աշխատություններում[3]: Պատումի համաձայն՝ քրիստոնեության աշխարհասփռման ժամանակաշրջանում (մ. թ. Ա. դար), երբ Ասործո Որդին քարոզիչներ էր ուղարկում աշխարհի չորս ծագերը՝ նոր հավատը սերմանելու, Արեւելքը բաժին է հասնում Ս. Թադեոսին, որն էլ աշակերտների մի խմբով գալիս է իրեն վիճակված բաժնեմասը եւ ձեռնամուխ լինում այն լուսավորելու գործին: Շուտով նա հայտնվում է Մեծ Հայքում՝ Արտազ (Մակու-Շավարշավան) գավառում, որտեղ որոշ ժամանակ հաջողությամբ քարոզելուց հետո սպանվում է Հայոց թագավոր Սանատրուկի (88-110 թթ.) կողմից եւ թաղվում տեղում[4]: Սրբի մարտիրոսվելուց հետո նրա աշակերտներից վերոհիշյալ Եղիշան մազապուրծ վերադառնում է Երուսաղեմ եւ հայտնում ուսուցչի ու ընկերների նահատակության լուրը: Այն ժամանակ Երուսաղեմի պատրիարք՝ տյառնեղբայր Հակոբը, Եղիշային եպիսկոպոս է

1 Տե՛ս «Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն», Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 63 (այսուհետ՝Ջամբռ): **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 9 (այսուհետ՝Ազգապատում):

2 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներած.՝ Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 9-12 (այսուհետ՝ **Մ. Կաղանկատուացի**): Պատմիչի եւ նրա երկի մասին մանրամասն տե՛ս նաեւ **А. А. Акопян,** Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 150-242):

3 **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 192-193 (այսուհետ՝**Կ. Գանձակեցի**):

4 «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց», Յօրինեալ վաւերական բանիւք ճառընտրաց մերոց եւ այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք ի Հ. Մ. վրդ. Ազգերեան, հտ. Դ., Վենետիկ, 1813, էջ 17-19; «Սուփերք Հայկականք», Ը., Վենետիկ, 1853, էջ 9-58: Նրա (Թադեոս առաքյալի) գերեզմանը գտնվում է Արտազ-Մակուի վանքում եւ պահպանվում է իբրեւ սրբատեղի /տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Հայոց եկեղեցին, Երեւան, 1993, էջ 23; Ազգապատում, հտ. Ա., էջ 15/:

ձեռնադրում եւ եւ ուղարկում Արեւելք՝ նահապակ առաքյալի գործը շարունակելու համար: Սպանձնելով մեծ պարտավորություն՝ նորընծա եպիսկոպոսը, դուրս գալով Երուսաղեմից, Պարսկապատանի վրայով անցնում է Մասքթաց երկիր՝ Չող, եւ սկսում իր ավետարանչական գործունեությունը: Առժամանակ անց Երուսաղեմի պատվիրակն այստեղից երեք աշակերտների ուղեկցությամբ մեկնում է Ուտիք եւ, հանգրվանելով նրա Սահառն քաղաքում, առաջ է տանում ծագող կրոնի քարոզումը: Այնուհետեւ նա տեղափոխվում է Գիս անվանված գյուղը, որը նույն Ուտիք նահանգում էր եւ բեմբասացությանը զուգընթաց տեղում եկեղեցի է կառուցում ու Ս. Պատարագ մատուցում: Գիսից Եղիշան, նույն առաքելությամբ ուղեւորվում է Ջերգունի կոչվող դաշտ, որը դիցամոլների զոհատեղի էր եւ դառնում է նրա աշխատությանց վերջին վայրը: Այստեղ նա ընդունում է նահատակության պսակը եւ զցվում մահապարտների համար նախատեսված փոսը Հոմենք վայրում: Երկար տարիներ ծածկված մնալուց հետո, հայտնաբերվում են նրա նշխարները եւ պահ տրվում նախ Ուռեկան գյուղում[5], ապա եւ Ներսմիհր կամ Ջրվշտիկ վանքում[6]: Տարիներ անց՝ Վաչագան Գ. Բարեպաշտ արքան (485-510 թթ.) սրբի նահատակության տեղում հիշատակի սյուն է կանգնեցնում եւ իր սեւեկապանին պահապան կարգում, որն էլ ճգնությամբ մինչեւ կյանքի վերջն ապրում է այնտեղ[7]:

Այսքանով ավարտում է Եղիշայի եւ նրա կյանքի ու գործունեության մասին պատմությունը[8]: Այն, Ն. Ակինյանի կարծիքով, «հնարուած է հաւանօրէն Զ. - Է. դարուն մեջ, երբ Աղուանից եկեղեցին սերտ յարաբերութեան մէջ էր Երուսաղէմի հայրապետներու հետ»[9]: Չնայած վստահ չենք բազմաշխատ միաբանի իրավացիության մեջ՝ պատումի ստեղծման ժամանակաշրջանի հարցում, բայց միանգամայն վստահ ենք, որ նրանում առասպելի եւ իրականության միահյուսմամբ ներկայացված են տարածաշրջանի առաջին լուսավորչի փրկչական գործունեությունը, անցած ուղին եւ աշխարհագրական այն ստույգ վայրերը, որոնցում սուրբն իրականացնում էր իր վերնառաք պարտավորությունը:

Կաղանկատվացու փոխանցմամբ մեզ հասած ավանդության մեջ Աղվանքը իբրեւ Եղիշայի գործունեության տեղի, չի հիշատակվում: Սակայն նշված տեղանվամբ աշխարհ, այնուամենայնիվ, հանդես է գալիս ավանդության գանձակեցիական տարբերակում, որում, ի դեպ, չկան Չողն ու Ուտիքն իր Սահառն քաղաքով, Ջերգունի դաշտով ու Հոմենք վայրով: [Եղիշան], - գրանցել է Գանձակեցին, - «գայ ընդ աշխարհն Պարսից եւ հասանէ *յաշխարհն Աղուանից*, գայ

5 Հոռեկան գտնվել է Արցախում, նրա Մեծ Կուենք գավառում, ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանում՝ Թալիշ գյուղի մոտ, որտեղ է եւ Հոռեկավանքը: Կոչվել է նաեւ Գլխավանք:

6 Գտնվել է Արցախ նահանգում՝ Տրտուի (Թարթառ) կիրճում: Հայտնի է նաեւ «Եղիշ Առաքյալ» անունով:

7 **Մ. Կաղանկատուացի**, էջ 12:

8 Նույն տեղում, էջ 9-12:

9 **Ն. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, «Հանդէս Ամսօրեայ», Վենետիկ, 1953, թիվ 4-6, էջ 171:

նա ի տեղի մի անուանեալ Գիս, եւ անդ շինէ եկեղեցի, եւ ինքն կատարի անդէն նահատակութեամբ»[10]: Տարակուսելի չէ այստեղ «Աղուանք» եզրույթի հիշատակությունը: Դեռեւս 461 թվականից Աղվանից մարզպանության կազմավորման շրջանում Ուտիքն ու Արցախը, իսկ որոշ ժամանակ անց՝ Զողը, Սասանյան Իրանի կողմից բռնակցվում են Բուն Աղվանքին եւ այնուհետ սկսում հանդես գալ «Աղուանք» անվան տակ: Վերջինս, այսպիսով, դառնում է նորաստեղծ վարչաքաղաքական միավորի աշխարհագրական անվանումը եւ իրենով արտացոլում վերոհիշյալ երկրների միացյալ տարածքը[11]: Գանձակեցու փոխանցմամբ մեզ հասած ավանդության մեջ խնդրո առարկա տեղանունը գործածված է այս վերջին իմաստով ու, ինչպես եւ Կաղանկատվացու բերած տարբերակը, մատնանշում է Զողից մինչեւ Ուտիք փռված տարածքը, ներառյալ նաեւ Աղվանքը: Այնպես որ տարածքային առումով ոչ մի տարբերություն. ավանդության երկու տարբերակներն էլ ցույց են տալիս Ս. Եղիշայի գործունեության միեւնույն ոլորտը, որն Արեւելքում եզրափակվելով Մասքութների երկրում, արեւմուտքում վերջանում էր ուտեացիների սահմանին:

Եղիշայի քարոզչության մեկնակետը Զողն էր, ուր, կտրելով-անցնելով Երուսաղեմ - Պարսկաստան ճանապարհը, եկել էր նա, «շրջանցելով» Հայաստանը: [Եղիշան], - մեջ է բերում Կաղանկատվացին, - «մտանէ ի Մասքութս, խոյս տուեալ ի Հայաստանեայցն»[12]: Նորանշանակ քարոզիչը Հայաստանը շրջանցում է հավանաբար աչքի առաջ ունենալով ուսուցչի՝ Ս. Թադեոս առաքյալի նահատակության փաստն Արտազ գավառում: Ուստի զգուշանալով Մեծ Հայքով անցնելուց՝ նա ընտրում է երկար ու շրջանային, բայց եւ ապահով ճանապարհ, որով շարժվելով հասնում է Մասքթաց երկիր: Օգտագործելով առիթը՝ Եղիշան մտնում է Զող եւ իր առաքելությանը հարիր գործունեություն ծավալում: Այստեղ նրա կատարած ողջ աշխատանքները ավանդությունն ամփոփում է մի կարճառոտ հաղորդմամբ: «Սկիզբն առնէ քարոզութեան ի Զողայ եւ...»-ի բնույթը ցույց է տալիս, որ Եղիշան երկար չի մնացել Զողում: Բայց եւ միաժամանակ այդ «տեղիս տեղիս զբազումս աշակերտեալ՝ ծանոյց զփրկութիւնն»[13]: Հաղորդման համառոտ նույն ժլատ տողերից երեւում է, որ նա, այնուամենայնիվ, այդքան կարճ ժամանակամիջոցում հասցրել է տյառնընտել գործողություններով փրկության լույսը տարածել, աշակերտներ պահել եւ այդպիսով երկրում քրիստոնեության տարածման ու ամրապնդման համար կայուն հիմքեր ստեղծել: Դրանից հետո նա հեռանում է Ուտիք: «Անտի [ի Զողայ] եկեալ յՈւտի գաւառ...», - ծանուցում է պատմիչը[14]: Այսպիսի տեղեկությունից այն տպավորությունն է ստացվում, թե

10 **Կ. Գանձակեցի**, էջ 193:

11 Մանրամասն տե՛ս **Ն. Ս. Սվազյան,** Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից Ը. դարը ներառյալ), Երեւան, 2006, էջ 199-207:

12 **Մ. Կաղանկատուացի**, էջ 10:

13 Անդ:

14 Անդ:

Երուսաղեմի առաքյալը Զողից ուղիղ Ուտիք է գնացել: Սակայն դա՝ միայն առաջին հայացքից: Իրականում Ուտիք հասնելու համար նա պետք է անցներ Աղվանքով, որն աշխարհագրորեն ընկած էր Զողի եւ Ուտիքի միջեւ եւ նրանց բաժանում էր միմյանցից: Հետեւաբար, այլ ուղի չունենալով, նա այս ուղեւորության ժամանակ հընթացս մտել է Աղվանք եւ այստեղ եւս ասպվածամատույց ծառայություն իրականացրել: Որ իսկապես Եղիշան եղել է Աղվանքում եւ իր գործունեությամբ նոր կրոնի համար ճամփա հարթել, ցույց են տալիս նրա հիշատակի հավերժացման նպատակով Կուրի ձախափնյա տարածքում կանգնեցված եկեղեցիներն ու սրբատեղիները: Այդպիսի մի եկեղեցու ավերակներ, այդ թվում եւ քարե պատվանդան աղվաներեն արձանագրությամբ, հայտնաբերվել են Մինգեչաուրում (Սուդագիլանում) տարվող պեղումների ժամանակ[15]: Արձանագրության վերծանմամբ զբաղվել է պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը[16] եւ պարզել, որ եկեղեցին կառուցվել է Է. դարում ու կրել Եղիշայի անունը: «Ի թուականութեան երեսներորդի ամսոյն Երակղի ... շինեցաւ քաւարան ... սրբոյն Եղիշայի», - ընթերցել է նա[17]: Ս. Եղիշայի անվան հավերժացման համար եկեղեցի է կառուցվել նաեւ Կապաղակ գավառի (Կուրկաշենի շրջան) Նիժ գյուղում[18], եւ մի մատուռ-ուխտատեղի՝ Վարդաշեն գյուղաքաղաքում[19]: Ուրեմն՝ տարակույս չկա, որ ըստ ավանդության՝ Եղիշան եղել է Բուն Աղվանքում, քարոզչական աշխատանքներ կատարել այնտեղ, եւ երախտավոր քրիստոնյաները նրա պատվին հուշարձաններ են կառուցել, որոնք վերածվելով սրբատեղիների՝ հավասարաչափ պաշտվել են ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների կողմից[20]: Մեզ հայտնի չէ, թե տվյալ երկրամասում սուրբն ինչեր է ձեռնարկել, բայց նկատի ունենալով առհասարակ նրա առաքելության նպատակը եւ այլուր կիրառած միջոցները՝ գտնում ենք, որ նա Աղվանքում եւս նույն սկզբունքով է առաջնորդվել. քարոզներ կարդացել, համայնքներ հիմնադրել, աշակերտներ ուսուցանել եւ իր գործունեությամբ երկրի բնակչության մեջ քրիստոնեության մասին առաջին պատկերացումները սաղմնավորել:

Աղվանքը դնելով քրիստոնեացման ուղու վրա՝ Ս. Եղիշան շարժվում է Հայոց Արեւելից կողմեր, եւ հաստատվելով Ուտիքում՝ ձեռնամուխ լինում լուսավորչական աշխատանքների: Նա Ուտիք է գալիս երեք աշակերտներով եւ քարոզչությունն սկսում նահանգի Սահառն քաղաքից. «Եկեալ յՈւտի գաւառ՝ ի Սահառն

15 Տե՛ս **М. Казиев**, Новые археологические находки в Мингечауре: “Доклады АН Аз. ССР”, т. IV, 9, 1948, էջ 396-403:

16 Տե՛ս **А. Г. Абрамян**, Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964, էջ 39-50:

17 Անդ, էջ, 76: Նաեւ տե՛ս **Ս. Կարապետյան,** Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երեւան, 1997, էջ 11:

18 **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 41-42:

19 Տե՛ս անդ, էջ 94-95; Նաեւ, **Մ. Բարխուդարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաշտան), Թֆլիս, 1893, էջ 248:

20 **Մ. Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 256, **Р. Б. Геюшев**, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, էջ 26:

քաղաք երիւք արամբք աշակերտելովք», - պատմում է զրուցագիրը[21]: Խմբին կրնկակոխ հետեւում են նրա աշակերտների հարազատները, ցանկանալով եւ կանգնեցնել նրանց «մոլար ուղուց» եւ տուն վերադարձնել:

Սահառնը (Սիառն, Սրհառն, Սոհառն, Սոհան), ինչպես երեւում է մեջբերումից, Ուտիքի քաղաքներից էր, հետեւաբար եւ, գտնվելու էր Կուրի աջափնյակում: Բայց, չնայած աղբյուրի այսքան հստակ ցուցմանը, Մակար Բարխուդարյանցն այն նույնացնելով Բուն Աղվանքի մայրաքաղաք Կապաղակի հետ՝ տեղադրում է նույնանուն գավառում[22], այսինքն՝ Կուրի ձախափնյակում, ինչն արդեն իսկ բացառվում է աղբյուրի վերոբերյալ հաղորդմամբ, ուստի եւ հարցը կարելի է փակված համարել: Բայց, եթե անվիճելի է, որ այն Ուտիքի քաղաքներից էր, ապա աղբյուրագիտական տվյալների բացակայության պայմաններում, նրա տեղը բուն նահանգում այդպես էլ մնում է անորոշ:

Սահառն քաղաքն առաջին վայրն էր Հայոց Արեւելից կողմերում, ուր Եղիշան մուտք գործելով, քրիստոնեություն է քարոզում իր երեք աշակերտների հետ: Սակայն նոր հավատը դժվարությամբ էր տեղ գտնում հասարակական գիտակցության մեջ: Շուտով քաղաքում հայտնվում են վերոհիշյալ աշակերտների հարազատները, որոնց հաջողվում է համոզել նորահավատներից երկուսին եւ տանել իրենց հետ, իսկ երրորդին, որը չի ցանկանում լքել ուսուցչին, սպանել[23]: Զրկվելով օգնականներից՝ Եղիշան, սակայն, չի դադարեցնում գործունեությունը, այլ տեղափոխվելով Ուտիքի մի ուրիշ բնակավայր, որը Գիս էր կոչվում, շարունակում է քարոզչական աշխատանքները: Որ Գիսը Ուտիքի բնակավայրերից էր, բազմիցս շեշտում է աղբյուրը[24]: Այդուհանդերձ ուսումնասիրողները միակարծիք չեն նրա տեղորոշման հարցում: Նրանցից ոմանք բնակավայրը տեղադրում են Կուրից հյուսիս՝ Կովկաս լեռան ստորոտում, Շաքի կամ Նուխի քաղաքից ոչ հեռու ընկած Քիշ գյուղի մոտակայքում[25], ոմանք ուղղակի նույնացնում են Նուխի քաղաքի հետ[26], ոմանք էլ այն տեսնում են Աղվանքի հյուսիս-արեւմտյան ծայրում[27]: Կարծիք էլ կա, որ քնության առարկա գյուղը կամ ավանը գտնվել է Մինգեչաուրում[28]: Ուսումնասիրողների մի ուրիշ խումբ այն տեղորոշում է գետի աջափն-

21 **Մ. Կաղանկատուացի**, էջ 10:

22 Տե՛ս **Մ. Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ 254:

23 **Մ. Կաղանկատուացի,** էջ 10: Անհայտ է, թե ինչ հիմքով Մ. Բարխուդարյանցն այս նահատակ աշակերտին անվանում է Վլաս (տե՛ս **Մ. Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 254):

24 Տե՛ս ստորեւ:

25 Տե՛ս **Ս. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփղիս, 1858, էջ 369; **Մ. Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ 82, 269; **Զ. Ի. Ямпольский**, К изучению Летописи Кавказской Албании, "Известия АН Азерб ССР", N 9, Баку, 1957, էջ 156; **Ն. Ս. Առաքելյան,** Եղիշէ առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ եւ Ուտի գավառի հարցի շուրջ, ԼՀԳ, 1991, թիվ 6, էջ 69-86, նույնի՝ Եղիշե Առաքյալը եւ նրա առաքելությունը, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Երեւան, 2001, էջ 49-60:

26 **А. В. Крымский**, Страницы из истории северного или Кавказского Азербайджана (Классическая Албания), "Сборник в честь С. Ф. Ольденбурга", Ленинград, 1934, с 302:

27 Տե՛ս **Ф. Мамедова**, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, էջ 224:

28 Տե՛ս **А. Г. Абрамян**, Дешифровка надписей Кавказских агван, էջ 46:

յակում, Պարտավից արեւմուտք[29]: Ռ. Գեյուշեւի կարծիքով՝ այն գտնվել է ԼՂՀ Մարտունու շրջանում[30]: Առաջին խմբի արտահայտած կարծիքի համար հիմք է ծառայել նույն անուններով գյուղերի գոյությունը թե՛ Շաքի կամ Նուխի քաղաքի մոտակայքում եւ թե՛ ԼՂՀ Մարտունու շրջանում: Բայց եթե Գիս եւ Քիշ (Գիշ) անունների արտաքին նմանությունը անկողմնակալ հետազոտողների մոտ սոսկ շփոթություն է առաջացրել, ապա պատմության կեղծարարների համար դարձել է շահարկումների հարմար միջոց: Մասնավորապես Զ. Յամպոլսկին Գիսը նույնացնելով Քիշ-Գիշ գյուղի հետ եւ տեղադրելով Շաքի-Նուխի քաղաքից հյուսիս, միաժամանակ ընդունելով, որ նրա մասին խոսող աղբյուրը այն մատնանշում է Ուտիքում, հանիրավի ընդարձակում է ուտեացիների տարածման շրջանակները, դրանցում ներառնում Բուն Աղվանքը եւ հայտարարում, թե Ուտիքն արեւելքում ձգվում էր մինչեւ Կասպից ծով[31]: Պատմական ճշմարտությանը հակասող նման դրույթ առաջ քաշելով՝ սույն հեղինակը ցանկանում է հաստատել իր այն կեղծ տեսակետը, թե «Ուտի» եւ «ուտեացիներ» անվանումները, զարգարերեն լեզվի նմուշներ են եւ մեզ հասած «Աղվանից աշխարհի պատմության» մեջ, իբր, հավասարապես գործածվել են որպես «Աղվանք» եւ «աղվանացիներ» հասկացություններին համարժեք եզրույթներ: Հետեւաբար, ըստ նրա, դրանց առկայությունը գրքում ցույց է տալիս, որ վերջինս նախապես գրված է եղել զարգարերեն եւ միայն հետագայում թարգմանվել է հայերեն, որի ժամանակ հայ եկեղեցականները, չհասկանալով «Ուտի» եւ «Աղուանք» եզրույթների իմաստային նույնությունը, երկու ձեւերն էլ պահպանել են եւ ներկայացրել իբրեւ միմյանցից տարբեր, առանձին երկրների անուններ[32]: Բայց «շինծու են» գիտնականի առաջ քաշած դրույթները, երազանքների ու ցանկությունների արդյունք: Նշված եզրույթները միշտ էլ իրենցով արտացոլել են միմյանցից բոլորովին տարբեր երկրներ ու ցեղեր, ինչը հայտնի է եղել դեռ անտիկ հեղինակներին, որոնք առանց վարանելու Ուտիքը կոչել են «Ուտիք («Օտենե»), իսկ Աղվանքը՝ «Աղուանք» («Ալբանիա»): Ավելին, նրանց հայտնի էր նաեւ, որ Ուտիքը Հայաստանի մարզերից էր եւ այն էլ՝ նշանակալից ու լավագույն հողերից[33]: Փաստ է, որ «Ուտիք»-ը ոչ մի աղերս չունի գարգարերենի հետ, եւ լինելով Հայոց մարզերից մեկը՝ առավել եւս չէր կարող գործածվել հարեւան երկրի անվան փոխարեն: Հետեւաբար, կասկած անգամ լինել չի կարող, որ Մովսես Կաղանկատվացու երկասիրությունը գրվել է ժամանակի գրական հայերենով՝ գրաբարով եւ մեզ հասել իր բնագրային լեզվով[34]: Եզ-

29 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Ե. 1969, էջ 277, ծնթ. 70 /այսուհետ՝ Վ. Առաքելյան/; **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. ԲԵՀ, 1971, թ. 1, էջ 176-177:

30 Տե՛ս **Р. Б. Геюшев**, նշվ. աշխ., էջ 26:

31 Տե՛ս **З. И. Ямпольский**, նշվ. աշխ., էջ 156:

32 Տե՛ս անդ, էջ 154-156:

33 Տե՛ս "Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе", Собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. I, СПб, 1890, էջ 270, 271:

34 Մանրամասն տե՛ս **Ա. Շ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երեւան,

բակացությունը մեկն է: Մտացածին են Ուտիք-Աղվանք ու «ուտեացի»-«աղվանացի» նույնացումներն ու արհեստական՝ դրա վրա կառուցած տեսակետները: Ուտիքը Աղվանքից առանձին աշխարհագրական միավոր էր եւ վարչականորեն մտնում էր Մեծ Հայքի կազմի մեջ, ուստի, Գիսը, որ նրա բնակավայրերից էր, նույնպես գտնվելու էր Հայաստանում, եւ այստեղ էլ (Հայոց Ուտիքում) պետք է փնտրել այն:

Աղբյուրների տեղեկությունների սեփական մեկնաբանություններով է հանդես գալիս նաեւ Ֆ. Մամեդովան: Ի մասնավորի՝ Գիսը Աղվանքի հյուսիս-արեւմտյան կողմերում ցույց տալով, նա հետապնդում է Աղվանից եկեղեցին Հայոց եկեղեցուն հակադրելու եւ նրան առաջնայնություն վերագրելու նպատակ: Ավանդությունից քաղելով այն տողերը թե՝ «յայսմ տեղւոջն [Գիսում] եղեւ սկիզբն *արեւելեայցս* մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի»[35], եւ «արեւելեայցս» արտահայտության տակ պարտադրելով հասկանալ «Աղվանքը», պատմաբանը հայտարարում է, թե Գիսում Եղիշայի կառուցած եկեղեցին առաջինն էր ողջ Այսրկովկասում[36], ինչը նշանակում է, որ իբր Աղվանքում է կառուցվել Այսրկովկասի առաջին եկեղեցին, իսկ Մեծ Հայքն այս հարցում ետ զիջում է նրան: Բայց սա առնվազն թյուրատեսություն է, որովհետեւ շատ ավելի վաղ քան Թադեոս առաքյալի սույն աշակերտը, Ս. Բարդուղիմեոսն էր Սյունիքում (Գողթնում) «Տեառն ընդառաջ» անունով եկեղեցի[37] եւ վանք (Մաղարթում) կառուցել[38]: Այնպես որ, եթե նույնիսկ նրա նման մտածենք, թե Գիսն Աղվանքում է, միեւնույնն է, այստեղ կառուցված եկեղեցին առաջինը չի լինի եւ ոչ էլ՝ Հայաստանից դուրս: Ահավասիկ, աղբյուրների հաղորդումների այսպիսի կամայական մեկնաբանություններով է Ֆ. Մամեդովան փորձում իրեն ու հայրենակիցներին համոզել, թե Աղվանքում քրիստոնեությունն ավելի վաղ է տարածում գտել, քան Մեծ Հայքում[39]: Թերեւս դա համապատասխաներ իրականությանը, եթե Ուտիքն ու Սյունիքը (եւ Արցախը) լինեին Աղվանքի մարզերից, բայց, որովհետեւ դա այդպես չէ, ապա ակներեւ է, որ վերոհիշյալ մտքերի հեղինակը բացահայտորեն խեղաթյուրում է պատմական ճշմարտությունը: Նա դրանով հակասության մեջ է ընկնում նաեւ Գիսի ու այստեղ կառուցված եկեղեցու շուրջ խոսող մեն-միակ աղբյուրի տվյալների հետ, քանի որ վերջիններիս համաձայն՝ այն գտնվում էր Ուտիքում: Այդ փաստը մատնանշվում է նախ բուն ավանդությունում՝ «Եկեալ

1966: **А. Мнацаканян, П. Севак**, По поводу книги З. Буниятова "Азербайджан в VII-IX вв.", ՊԲՀ, 1967, թիվ 1 եւ ուրիշներ, որոնց թվարկումը տես **Ն. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 11, ծնթ. 26:

35 **Մ. Կաղանկատուացի**, էջ 10:

36 Տես **Ф. Мамедова**, նշվ. աշխ., էջ 224:

37 Տես «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910 (այսուհետ՝ **Ս. Օրբելյան**), էջ 211:

38 Տես անդ, էջ 341:

39 Տես **Ф. Мамедова**, նշվ. աշխ., էջ 224:

[Եղիշայ] յՈւտի գաւառ, ... եկեալ ի Գիս»[40], ապա հաստատվում է նաեւ առանձին իրադարձությունների նկարագրություններում: Այսպես, խոսելով Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին, Կաղանկատվացին գրում է, որ ուսուցչապետն ու իր աշակերտները հասնելով «ի սահմանս արեւելից ի գաւառն Ուտիական...բնակէին...առ տեղեաւն, որում Գիսն կոչեն»[41]: Ըստ մի ուրիշ տեղեկության՝ Վարազ-Պերոժ Առանշահիկ իշխանի տունը գտնվում էր «յՈւտի գաւառի ի Գիս»[42] եւ, վերջապես, պատմվում է, որ Իսրայել անունով աստվածավախ մի քահանա երկար փնտրտուքներից հետո հայտնաբերում է այն խաչը, որ թաքցրել էր Ս. Մեսրոպ Մաշտոցը «ի Գիս անուանեալ գիւղ, որ յՈւտի գաւառի»[43]: Սկզբնաղբյուրի այս բազմաթիվ շեշտադրումները, ինչպես տեսնում ենք, անմեկին պարզությամբ ցույց են տալիս, որ Ս. Եղիշայի հիշյալ քարոզատեղին գտնվում էր Կուր գետից հարավ տարածված հայկական Ուտիք նահանգում, եւ այստեղ կառուցված եկեղեցին առաջինն էր Հայոց Արեւելից կողմերում, ինչն այդքան հաստատակամորեն պնդում է աղբյուրը: Նրա հավաստմամբ Գիսում կառուցված եկեղեցին «եղեւ սկիզբն *արեւելեայցս* եկեղեցեացս մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի»[44]: Որ Գիսում Եղիշայի կառուցած եկեղեցին արեւելցիների համար առաջինն էր, Կաղանկատվացին կրկնում է եւս մեկ անգամ: «Առաջին մայր եկեղեցեացն *արեւելեայց* Գիսոյ եկեղեցին նորին [Եղիշայէ] հիմնադրեալ», -գրում է նա[45], մեր ընդգծած բառի տակ նկատի ունենալով մասնավորապես Ուտիքն իր Գիս ավանով: Իսկ որ վերջինիս համար Ուտիքը Գիս ավանով Արեւելք էր, բացահայտում է ինքը՝ պատմիչը գրելով, որ Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ հասնում է «ի սահմանս *արեւելից*՝ ի գաւառն Ուտիական»[46]: Ահավասիկ սրանք են ուսումնասիրվող հարցի շուրջ առկա հաղորդումները, որոնց կանխակալ մոտեցումներով ադրբեջանցի հեղինակները փորձում են Գիսը տեղորոշել իրենց ցանկալի վայրում: Սակայն, ինչպես տեսնում ենք, փաստերը համառ են եւ չտեսնողներին հակառակ՝ ցույց են տալիս, որ Գիսի եկեղեցին առաջինն էր Հայոց Արեւելից կողմերում:

Շարունակելով Գիսի տեղորոշման հարցի քննությունը՝ ասենք, որ իրավացիորեն այն փնտրելով Կուր գետից հարավ ընկած տարածքում, Ռ. Բ. Գեյուշեւը, սակայն, խնդրո առարկա գյուղը տեղադրում է Մարտունու շրջանում, որտեղ այսօր էլ գոյություն ունի նման անունով մի գյուղ (Գիշի)[47]: Բայց որքան գայթակղիչ է նման զուգադրումից հետեւություններ անելը, նույնքան էլ՝ անընդունելի: Ներկայիս Մարտունու շրջանը հնում ընդգրկել է Արցախի Պազկանք գավառի

40 **Մ. Կաղանկատուացի**, էջ 10:
41 Անդ, էջ 95:
42 Անդ, էջ 213:
43 Անդ, էջ 214:
44 Անդ, էջ 10:
45 Անդ, էջ 274-275:
46 Անդ, էջ 95:
47 Տե՛ս **Р. Б. Геюшев**, նշվ. աշխ., էջ 25-26:

մի հարվածը եւ Մուխանքն՝ ամբողջովին[48], ինչը կնշանակի, թե Գիսը գտնվել է Արցախում: Մինչդեռ աղբյուրի ցուցմամբ՝ այն Ուտիքի կազմում է եղել, ուստի եւ չէր կարող նույնական լինել այլ նահանգում նման անվամբ բնակավայրի հետ: Խնդրին ավելի ճիշտ են մոտեցել Վ. Առաքելյանն ու Բ. Ուլուբաբյանը, որոնք Գիսի տեղը որոշում են Ուտիքի կենտրոն Պարտավից արեւմուտք[49]: Այս տեղորոշումը նրանց տանում է Ուտի-Առանձնակ գավառ, որն արդարացվում է Կաղանկատվացու մի քանի անուղղակի վկայություններով, իսկ հարեւան շրջանների Գիս գյուղերի անվանական նմանությունը կարելի է բացատրել կա՛մ պարզ զուգադիպությամբ, կա՛մ առավելագույնը՝ գաղթականությամբ:

Եղիշայի գործունեությունը Գիսում անհամեմատ արդյունավետ էր: Նոր վայրում նա եկեղեցի է կառուցում եւ այն վերածում արեւելյան կողմերի եկեղեցական-լուսավորչական կենտրոնի: Այստեղ է մատուցվում եւ առաջին պատարագը: «Սուրբ հայրապետն [Եղիշայ], - ավանդում է զրույցը, - եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի եւ մատոյց զանարիւն պատարագ»[50]: Ելնելով այս վերջին տեղեկությունից՝ հնարավոր ենք համարում, որ նա նաեւ այլ, քրիստոնեական եկեղեցիներին հատուկ, արարողակարգեր էլ է սահմանել, որոնք բարձրացրել են Գիսի հեղինակությունը: Է. դարում այն արդեն եկեղեցական տոնակատարությունների անցկացման հանդիսավայր էր: Մովսես Դասխուրանցին, պատմելով Աղվանքի կաթողիկոս Տեր Եղիազարի (683-689) կատարած գործերի մասին, նշում է նաեւ, որ վերջինս կարգադրում է Գիսում Մեսրոպ Մաշտոցի թաքցրած եւ իր օրերում հայտնաբերված Խաչի գյուտի օրը տոնել հենց Գիսի եկեղեցում: «Կարգ եդ [Տէր Եղիազարն], - գրում է մատենագիրը, - յաւր խաչին գտանել ի Գիս»[51]:

Գիսում ունեցած հաջողությունները գործունեության նոր ասպարեզ են բացում Եղիշայի առաջ, եւ նա այստեղից շարժվում է Զերգունի կոչվող դաշտը, որտեղ գտնվում էր նաեւ Հոմենք անունով մի վայր, որը հայտնի էր մահապարտների համար նախատեսված փոսով: Մակար եպս. Բարխուդարյանցը Զերգունի (Զարդունի, Զարգունի, Զերկունի) դաշտը նույնպես տեղադրում է Կուր գետի հյուսիսային շրջաններում՝ Կապաղակ քաղաքի եւ նույնանուն գավառի սահմաններում[52], իսկ Հոմենքի համար գրում է, թե Կաղանկատվացին «Հոմենք է անուանում Բում[53] աւանս»[54]: Սակայն դարձյալ անընդունելի են նրա առաջարկ-

48 Տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Արցախը հին ու վաղ միջնադարյան հայկական սկզբնաղբյուրներում, «Էջմիածին», 2009, Ա., էջ 47: Հմմտ. նաեւ **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009 (ներդիր-քարտէզ):

49 Տե՛ս **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 277, ծնթ. 70; **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 117:

50 **Մ. Կաղանկատուացի**, էջ 10:

51 Անդ, էջ 344:

52 Տե՛ս **Մ. Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 53, 241:

53 Բում կոչված ավանը, ըստ Մ. Բարխուդարյանցի՝ «Նիժից վերեւ է շինուած նոյն մեծ սարի [Կովկասի] հարաւային սրդոտում» (տե՛ս «Աղուանից երկիր եւ դրացիք», էջ 255):

54 Անդ: Ի դեպ, Կաղանկատվացու մոտ եպիսկոպոս - հետազոտողի ասածը հաստատող ոչինչ չգտանք:

ները եւ կրկին այն պարզ պատճառով, որ նա դրանց տեղը ցույց է տալիս Կուրի ձախափնյակում, երբ բացահայտ է, որ վերջիններս գտնվել են գետի աջափնյա հայկական Ուտիք նահանգում: Վ. Առաքելյանը դաշտն իր Հոմենք վայրով տեղադրում է Կուրի աջ ափին, համապատասխանաբար՝ ԼՂՀ Մարտունու շրջանում[55] եւ Դաշտային Ղարաբաղում[56], իսկ Ռ. Բ. Գեյուշեւը՝ նույնացնում է այժմ էլ Տրտուի ձորում գտնվող եւ իբրեւ թե նույնպես «Հոմենք» անունը կրող վայրի հետ[57]: Բայց այն հայտնի իրողությունը, որ նրանք հիշատակվում են Ուտիքի սահմաններում, կասկածի տակ է դնում եւ այս տեղորոշումների հավանականությունը, քանի որ դրանք նշվածները գտնում են Արցախ: Ղ. Ալիշանի կարծիքով՝ «Կուրակ գետի մոտ պետք է փնտրել Զարգունի դաշտակի տեղը»[58]: Կարելի է, իհարկե, չնչին տեղաշարժերով ավելի հստակություն մտցնել նրանց տեղադրություններում, սակայն, էականն այն է, որ Զերգունի դաշտը՝ Հոմենք վայրով, աներկբայորեն ցույց է տրված Ուտիքում: Հետեւաբար, Ս. Եղիշայի այստեղ գալը պետք է դիտել իբրեւ նրա քարոզչական գործունեության շարունակություն Ուտիքի մի այլ վայրում:

Զերգունին մի «տեղի զոհարանի դիւցամոլ կռապաշտիցն»[59] էր: Այնուամենայնիվ, Եղիշան դիմելով համարձակ քայլի, գնում է անհավատների մոտ, փորձելով դարձի բերել նրանց իրենց իսկ որջում: Սակայն այստեղ նա, ինչպես առաջին քրիստոնյաներից շատերը, որոնք կյանքով էին հատուցում իրենց հավատին անդավաճան մնալու համար, տանջամահ է արվում եւ զցվում Հոմենքի գուբը[60]: Ավանդությանը անհայտ է մնացել «եթէ յորմէ իմեմնէ եղեւ ելք իրացն»[61], բայց, կարծում ենք, Եղիշայի խոշտանգումն ու մահը տեղի են ունեցել քուրմերի սադրանքով՝ մոլեռանդ ամբոխի կողմից:

Այսպես է ավարտում իր բարեպաշտ կյանքը Ս. Եղիշան: Ինչպես երեւում է այս քննությունից՝ նրա պաշտամունքային սպասավորումը ծավալվել է Կուրի թե ձախափնյա եւ թե աջափնյա շրջաններում՝ սկսվելով Զողից եւ վերջանալով Ուտիքում: Դիտարկումները, սակայն, պարզում են, որ Եղիշայի գործունեությունը գետի երկու կողմերում ընթացել է անհավասարաչափ: Եթե Զողում սրբի ներդրած ողջ ավանդը բնութագրվում է մի համառոտ հաղորդմամբ[62], իսկ Աղվանքի մասին ոչինչ չի ասվում, ապա Ուտիքում նրա ձեռնարկումների նկարագրություններն ավելի հանգամանալից են, խորը եւ ըստ տեղավայրերի՝ Սահառն քաղաք, Գիս ավան, Զերգունի դաշտ, Հոմենք: Այսպիսի ընդգծված տարբերությամբ խոսելը ցույց է տալիս, որ Ս. Եղիշայի գործունեությունը Կուրի աջափնյակում կամ,

55 Տե՛ս **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 277, ծնթ. 71:
56 Տե՛ս անդ, էջ 278, ծնթ. 72:
57 Տե՛ս **Р. Б. Геюшев**, նշվ. աշխ., էջ 26:
58 **Ղ. Ալիշան**, Արցախ, Երեւան, 1993, էջ 31:
59 **Մ. Կաղանկատուացի**, էջ 11:
60 Տե՛ս անդ: **Կ. Գանձակեցի**, էջ 193:
61 Անդ:
62 Տե՛ս վերեւում:

որ նույնն է, Ուտիքում, եղել է երկարատև ու հեռեւողական: Մակաբերելի է, որ քարոզչի մուտքը Ուտիք ունեցել է նպատակային բնույթ եւ կապված է եղել Մեծ Հայքում, մասնավորապես, նրա հյուսիս-արեւելյան կողմերում քրիստոնեության տարածման հետ, ինչն, անկասկած, նախատեսվել էր դեռ Երուսաղեմում՝ Ս. Թադեոսի նահատակությունից եւ նրա աշակերտի՝ Երուսաղեմ վերադառնալուց հետո: Առաջինի վախճանով Մեծ Հայքի քրիստոնեացման գործընթացն ընդհատվում է, վտանգելով ողջ քրիստոնյա Արեւելքի գաղափարական միասնությունը:

Դա կանխելու համար Սուրբ քաղաքի պատրիարքությունը, ի դեմս տեառնեղբայր Հակոբի, Եղիշային եպիսկոպոս ձեռնադրելով կրկին ուղարկում է Հայաստան: Պատրիարքարանի այդպիսի որոշումը պատահական չէր: Եղիշան, լինելով Ս. Թադեոսի աշակերտը, նրա հետ արդեն եղել էր երկրում եւ ավելի լավ, քան մեկ ուրիշը կարող էր շարունակել ուսուցչի՝ ակամայից կիսատ թողած գործը: Իսկ առհասարակ, առաքելական շրջանում Հայաստանի ու հատկապես՝ վերջինիս հյուսիս-արեւելից կողմերի քրիստոնեացումը Երուսաղեմի մշտական հոգածության ներքո էր, եւ այն այստեղ նահատակված կամ այլ վայր տեղափոխված քարոզիչների փոխարեն նորերին էր ուղարկում: Այդպես վարվեց, օրինակ, Ս. Բարդուղիմեոսը Սյունիքից հեռանալիս եպիսկոպոս ձեռնադրելով ու իբրեւ իրեն փոխանորդ թողնելով իր աշակերտ Կումսիին[63]: Նմաններից էր նաեւ Եւստաթեոս անունով առաքելաշավիղ քարոզիչը, որի աթոռանիստը եղել է Տաթեւի վանքը: «Մեծ Սիւնիս եւ Փոքր Սյունիս [Արցախ], - գրում է Վարդան վարդապետը, - ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթեւ»[64]: Նա եւս Ս. Թադեոսի աշակերտներից էր եւ եպիսկոպոս ձեռնադրվելով, ուղարկվել էր Սյունիք, անդ գործել եւ մարտիրոսվելուց հետո թաղվել Տաթեւի վանքում[65]: Սյունիքից բացի առաջին լուսավորչներ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի աշակերտները քարոզչություն էին անում նաեւ Արցախում: Ըստ Վանական Վարդապետի՝ Հայոց այս նահանգում գործում էր Դադիու կամ Դադի անունով մի կրոնավոր: «Դադիու, - գրում է նա, - մի՝ յեօթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ ... եմուտ ի Փոքր Սիւնիս [Արցախ] եւ կրօնաւորեալ՝ անդէն ծածկաբար վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»[66]: Նրա մահից հետո լուսավորչական աշխատանքներն Արցախում շարունակելու համար այստեղ է ուղարկվում Խադ անունով ճանաչված մի ուրիշ քարոզիչ, որի մասին դարձյալ տեղեկացնում է Վանական Վարդապետը: Ու-

63 Տե՛ս **Ս. Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 21:

64 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 12:

65 Եկեղեցական ավանդությունն այս սրբի անվան հետ է կապում Սյունիքի հայրապետանոց Տաթեւի վանքի անունը (տե՛ս Ազգապատում, հտ. Ա., էջ 25):

66 **Ղ. Ալիշան**, Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հտ. Բ., Վենետիկ, 1901, էջ 47 (այսուհետ՝ «Հայապատում»): Տե՛ս նաեւ «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901 /այսուհետ՝ «Գիրք Թղթոց»/, էջ 536; Նույնը տե՛ս նաեւ «Ժամանակագրութիւն տեառն Միխայիլի Ասորոց պատրիարքի», Յերուսաղէմ, 1871, Յաւելուած, էջ 33: Պատմիչի նշած վանքը Դադի վանքն է՝ Արցախում, Տրտուի հովտում: Կոչվել է նաեւ Խութավանք:

շագրաւ այս հաղորդման մեջ Խադի կողքին հիշատակվում է նաեւ Եղիշան. «Եւ Եղիշէ եւ Խադա երկուք յեւթանասնիցն են, - գրում է Վանական Վարդապետը, - եւ գնացին ի կողմանս Աղուանից [իմա՛ Հայոց Արեւելից կողմեր] հրամանաւ Թադէոսի[67] եւ անդ կատարեցան»[68]: Սրանից հետեւում է, որ նշվածները Ս. Թադեոսի նման յոթանասուն աշակերտներից էին եւ երկուսն էլ ուղարկվել էին հատկապես Հայոց Արեւելից կողմեր, Խադն՝ Արցախ (Փոքր Սյունիք) վախճանված Դադիին փոխարինելու, իսկ Եղիշան՝ Ուտիք՝ տեղերում քրիստոնեական գաղափարներ սերմանելու առաջադրանքով[69]: Այսպիսով, վերոշարադրյալից ակնառու պարզությամբ երեւում է, որ դեռեւս Երուսաղեմում էր նախանշված Եղիշայի գործունեության ոլորտը, եւ նրա հայտնվելը Ուտիքում ուներ նպատակային բնույթ: Այն ողջ Հայոց աշխարհը լուսավորելու՝ Երուսաղեմի կրոնական քաղաքականության անմիջական շարունակությունն էր:

Ուղեւորվելով Հայաստան ինքնուրույն գործունեության՝ Ս. Եղիշան, սակայն, նշանակված վայրն անվտանգ հասնելու համար, ինչպես տեսանք, ընտրում է մի ճանապարհ, որն անցնում էր Չողի եւ Աղվանքի տարածքներով: Ու այս կերպ մուտք գործելով համընթաց ընկած հիշյալ երկրները, Երուսաղեմի նվիրակը նոր հավատի ճանաչմանն ուղղված ընդգրկուն միջոցներ է ձեռնարկում, դառնալով այդ երկրների առաջին քարոզիչն ու լուսավորիչը: Մինչդեռ Ֆ. Մամեդովան քրիստոնեության՝ Աղվանք ներթափանցումն ու այստեղ համայնքների հիմնադրումը կապում է առաքյալներ Ս. Թադեոսի ու Ս. Բարդուղիմեոսի անվանց հետ: Իր այս կարծիքը հիմնավորելու համար նա վկայակոչում է Կաղանկատվացու եւ Օրբելյանի հաղորդումները, ինչպես միշտ, դրանք մեկնաբանելով իրեն հարմար եղանակով[70]: Սակայն սխալվում է հետազոտողն իր կարծիքում: Ճիշտ չէ ենթադրելն անգամ, որ հիշյալ առաքյալներից զոնե մեկը քարոզչության համար երբեւիցե հասած լիներ Աղվանք: Նրանց գործունեության ոլորտը եղել է Մեծ Հայքը, որտեղ էլ նրանք քարոզել եւ նահատակվել են: Այնպես որ Եղիշան էր այն քարոզիչը, որ առաջինն էր հայտնվել Չողա երկրում, Աղվանից աշխարհում ու Հայոց Արեւելից կողմերում եւ լուսավորել դրանք: Դա հաստատում են նրա մասին խոսող մատենագիրները: «Առաջին պատճառ լուսաւորութեան, - գրում է, օրինակ, Մովսես Դասխուրանցին, - մերոյ է սուրբն Եղիշայ[71]: Նրան կրկնում է Կիրակոս Գանձակեցին, որի բառերով՝ «Առաջին պատճառ լուսաւորութեան *կողմանցն Արեւելից* ասեն զսուրբն Եղիշէ»[72], ընդգծված եզրույթի տակ, ինչպես պարզաբանել ենք, հասկանալով Չողը, Աղվանքն ու Հա-

67 Թվում է՝ պատմիչն այստեղ ճիշտ չէ: Եղիշան, ուրեմն եւ Խադը Ս. Թադեոսի հրամանով չէ, որ եկել էին Հայոց Արեւելից կողմեր: Այդ ժամանակ նա արդեն վախճանված էր:

68 «Հայապատում», էջ 47., «Գիրք Թղթոց», էջ 536:

69 Այս սրբերի հիշատակը հավերժացնելու համար եւս նրանց անուններով վանքեր են կառուցվել Արցախում՝ նույն Տրտուի հովտում՝ Խաղարավանքը կամ Խաթրավանքը եւ «Եղիշ առաքյալ» վանքը:

70 **Ф. Мамедова**, նշվ. աշխ., էջ 224:

71 **Մ. Կաղանկատուացի**, էջ 342:

72 **Կ. Գանձակեցի**, էջ 192:

յոց Արցախ եւ Ուտիք նահանգները կամ Հայոց Աղվանքը: Որ Եղիշան է եղել այս երեք երկրների լուսավորիչը՝ նորից ու նորից փաստում է Մովսես Դասխուրանցին: Նա գրում. «Սա [Եղիշան] եկն լուսաւորիչ երից աշխարհացս՝ Զորայ, Լփնաց եւ Աղուանից»[73], որտեղ Զողը Մասքթաց երկիրն է, Լփինքը՝ Բուն Աղվանքը[74], իսկ Աղվանքը՝ Հայոց հյուսիս-արեւելյան կողմերը, որոնք Ե. դարի կեսերից, Աղվանից մարզպանության կազմավորումից ի վեր, աշխարհագրորեն կոչվում էին «Աղուանք»[75]: Երեք երկրներում նրա վարած քարոզչությունն էլ է իր դերը խաղացել, որ հետագայում Աղվանքի կաթողիկոսները կրեն «Աղուանից, Լփնաց եւ Զորայ կաթողիկոս» տիտղոսը[76]:

Եղիշան, որ եկել էր Երուսաղեմից հատուկ առաքելությամբ ու տեառնեղբայր Հակոբի պատվերով, առաքելաշավիղ գործիչներից էր եւ ամենայն իրավամբ կարող է դիտվել իբրեւ «առաքյալ», որ նմանապես նշված երկրներում զցում է «առաքելական» հավատի հիմքերը. «Զառաքելական հաւատն մեր, - գրում է Դասխուրանցին, - ...նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ»[77]: Իզուր չէ, որ նրան նվիրված Ներսմիհր (Ջրվշտիկ) վանքը, ուր ամփոփվել էին նրա մասունքները, կոչվել է «Եղիշ առաքյալ»: Ասվածի հետեւությամբ կարելի է անվարան պնդել, որ առաքելական էր նաեւ նրա հիմնադրած եկեղեցին Ուտիքում (Գիսում), որ հետագայում Բուն Աղվանքում կառուցված եկեղեցիների նախօրինակը դարձավ:

Այսպիսով, քրիստոնեությունն Աղվանք եւ նրան մերձակա երկրներ մուտք է գործում Եղիշա առաքյալի ջանքերով, եւ նրա շուրջ հյուսված ավանդությունն արտացոլում է այդ իրողությունը: Նոր հավատի գաղափարախոսության տարածմանն ուղղված իր գործունեությամբ նա քրիստոնյա աշխարհում մնում է իբրեւ Հայոց Արեւելից կողմերի, Բուն Աղվանք աշխարհի եւ Զորա երկրի լուսավորիչ[78], որի հաստատած «կանոնի կացին աշխարհս Հայոց եւ Աղուանից համակամ եղբայրութեամբ եւ անքակ ուխտի»[79]:

---

73 **Մ. Կաղանկատուացի**, էջ 342:

74 Վաղուց է, ինչ ուսումնասիրողները «Լփինք» տեղանվան մեջ տեսել են «Ալբանիա» եզրույթի կրճատված ձեւը /տե՛ս **И. Шопен**, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб, 1866, էջ 373: **С. В. Юшков**, К вопросу о границах древней Албании, “Исторические записки АН СССР”, Москва, 1937, т. I, էջ 138: **С. Т. Еремян**, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, “Записки института Востоковедения АН СССР”, т. VII, Москва-Ленинград, 1939, էջ 149:

75 **Ն. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-207:

76 **Մ. Կաղանկատուացի**, էջ 343:

77 Անդ, էջ 300:

78 Տե՛ս **Ն. Ս. Սվազյան**, Սուրբ Եղիշան Հայոց Արեւելից կողմանց, Զողա երկրի եւ Աղվանից աշխարհի լուսավորիչ, «Լրաբեր հաս. գիտ.», 2000, թ. 2, էջ 55-65:

79 Տե՛ս **Մ. Կաղանկատուացի**, էջ 15:

РЕЗЮМЕ

Согласно одного из церковных преданий, христианство в северо-восточные края Великой Армении и в страны Чор и Алуанк (Кавказскую Албанию) проникло в первой половине II века благодаря проповеднической деятельности св. Егише - ученика апостола Фаддея. Выбрав для себя местом просветительской деятельности удел "Восток", в частности, область Утик Великой Армении, ученик апостола Фаддея отправился туда, минуя центральные ее области. Добравшись до стран Чор и Алуанк, св. Егише начал свою проповедническую миссию.

Завершая свою миссию в указанных странах, св. Егише дошел до Утика и начал проповедовать христианство в его городах Сphарн, Гис, в долине Зергуни и в местечке hоменк. Усилиями его были основаны христианские общины, в Гисе была построена церковь - первая в северо-восточных краях Армении, и была создана прочная основа для распространения христианства.

Святой Елише погиб в hоменке мученической смертью.

Таким образом, христианство в Алуанк и сопредельные ему страны проникло в первой половине II века благодаря миссионерской деятельности св. Егише, почему он и считается по праву первым просветителем этих трех стран.

SUMMARY

According to one of the church-traditions, Christianity was introduced in North-Eastern regions of *Magna Armenia* and in the countries Chor and Albania in the first half of 2nd century, thanks to the missionary efforts of St. Eghiša, disciple of the apostle Thaddeus. Having chosen the Eastern regions of Magna Armenia as his missionary field, namely the district of Utik' St. Eghiša started his missionary journey escaping the central regions of Magna Armenia and getting thus the countries of Chor and Albania where he started his mission.

After having accomplished his mission in these countries, St. Eghiša launched another project of evangelization in the regon of Utik and namely in the cities Spharn, Gis, in the valley Zergouni and in the village Homenk'. Thanks to his endless efforts Christianity was solidly ancred in these districts; in Gis, one of the newly erected cathedrals became the important center for the evangelization of the Caucasian Albania.

St. Eghiša was martyred in Homenk'. He has been declared the first illuminator of the Caucasian Albania in the tradition of the Albanian Church.